

յառաջ դէպ ի հարաւ գրաշտն արգաւանդ, որ ունի դժգոյն Զուրն ջերմկոյ, և զսքանչելի եկեղեցին Ամենափրկչին: Գեօղս* այս՝ որ թեալ նախագոյն ճոխ եւ փարթամ, արդ վասն մեղաց մերոց նուաստացեալ եւ աղքատ. բայց ունի տակաւին զեօթանեսին եկեղեց(3)ցիս, որոց մեծագոյնն է Սուրբ Աստուածածնին, ուր մկրտեցեալ եմ Կարապետ անուանակոչութեամբ, գոյով որդի (ՌՃԺ Թուին) հօր Մարտիրոսի եւ մօր Մարիամու, որ եօթն ամսենի ծնեալ եւ եօթն ամսկաթն առեալ ի մօրէս, յաղազս որոյ «Ծնկեր» եմ մակաձայնեցեալ:

Իսկ յետ ուսման դպրութեան եւ յետ վաճանի ծնողացս ի ՌՃԻԷ Թուին, կամեցայ եւ եկի ի Գաղատիայ յառաքելակերտ վանա այս սուրբ. վասնզի առաջնորդ տեղ(ւ)ոյս գոյով ի վերասացեալ զեղջէս մերմէ՝ Տէր Ստեփանոս Արքեպիսկոպոսն, ճգնադրեաց եւ սուրբ վարդապետն, որ մակամուսնաբ «Մաչլու» կոչիւր, այսինքն՝ վարսաւոր, զի ոչ տայր սափրել տէրս գլխոյն, բայց միայն դբաշն, ընկալաւ զնուաստութիւնս իմ ընտանի սիրով տեղակցութեան, եւ յետ երից ամաց, ի ՌՃԼ Թուին, արար զիս քահանայ, ազուցանելով զսուրբ վեղարն ի գլուխս իմ: Յետ այլ եւս երից ամաց, ի Թուին ՌՃԼԳ, ետուր ծառայիս իւրում զմասնաւոր իշխանութիւն վարդապետութեան, եւ ի ՌՃԼԶ Թուին ետուր զծայրագոյն իշխանութեանն գաւազան:

Եւ զկնի չորից ամաց ծառայութեանս իմում՝ առաքեաց զիս ի մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, յորում ամի էր մեծ վարդապետն Մինաս Յամթեցի, եկեալ անդ ընդհանրական նուիրակ Սուրբ Էջմիածնի, եւ կացուցեալ (4) պատրիարք սրբոյ Աթոռոյն Երուսաղեմի ի Սրբազան Կաթողիկոսէն Տեառն Եղիազարու Հռոմկլայեցոյ, որում ամի վաճանեցաւ Կաթողիկոսն եւ յաջորդեաց աշակերտ նորին Տէր Նահապետ Կաթողիկոս Ուրհայեցի Աթոռոյ Սուրբ Էջմիածնի:

Եւ իմ մտեալ ի համբոյր վերասացեալ մեծի վարդապետին եւ Պատրիարքի Սրբոյ Երուսաղեմի՝ ի յերեսաց վարդապետիս իմոյ, ընդ որս եւ առի հրաման յարգունուստ առ ի նորոգել զգմբեթ վանացս. եւ դարձեալ անդրէն ի վանս առ վարդապետն իմ, եւ զառաջինն ամի նորոգեցաք զգմբեթն շատագոյն ծախիւք, որպէս տեսանի:

Իսկ ի ՌՃԽԳ Թուին, Սրբազան վարդապետս իմ որ ճգնասերն էր, առանց ուրուք միջնորդի՝ յինքնէ կամօք եւ յօժարութեամբ իւրով յանձնեալ նուաստութեանս իմոյ զԱռաջնորդական հոգացողութիւն վանացս, եւ առաքեաց զիս բազում ընծայիւք եւ գրով աղաչանաց առ Սրբազան Տէր Նահապետ Կաթողիկոսն, ուստի շնոր-

* Զեռագիրն ունի՝ Գեղոս:

հեցաւ հիքոյս պատիւ՝ եպիսկոպոսութիւն բոլոր վիճակիս Գաղատիոյ, եւ առաջնորդութիւն վանացս սրբոյ:

Եւ ինքն Սրբազան վարդապետս իմ գնացեալ ի բնակն երկիր իւր՝ ի գեօղն մեր, եւ մենացեալ յոսկան ճգնութեամբ ի վանս Սուրբ Աստուածածնի, որպէս ցուցաւ ի վերոյ, որ ըստ կարի իմում ի հեռուստ պաշտեցի (5) որքան եւ կարացի. որ անտանօր ի Թուին ՌՃԽԶ եղեւ փոխեցեալ առ որ ցանկայր՝ ի պարս ճգնաւորաց եւ սրբազան վարդապետաց:

Յետ որոյ մնացեալ իմ աստ, եւ ի ՌՃԾԴ ելի ի Սուրբ Երուսաղեմ յերկրպագութիւն սուրբ տեղեացն Քրիստոսի, յորում ամի վաճանեցաւ Նահապետ Կաթողիկոսն Սուրբ Էջմիածնի, եւ Պատրիարք Սրբոյ Երուսաղեմին մեծ վարդապետն Մինաս, որոյ վերջին տեսութեանն մնացի կարօտով եւ գնացի արտաս(ո)ւօք: Եւ ուխտեալ զսուրբ տեղիսն Քրիստոսի՝ դարձեալ վարդապետօք որ ընդ յիս, հոգեւոր եղբարք իմով Յովհաննէս ճգնադրեաց վարդապետաւ համադրակցի իմոյ, եւ Մովսէս վարդապետաւ Գաղատացւոյ, որ ձեռնասուն մեր, եւ Մարտիրոս վարդապետաւ աշակերտաւ մերով, եւ այլ եւս պատրաստական միաբանիւքս իջի ի Հալապ, անտի ի զարմանալին Հռոմկլայ՝ ուխտելով զտապան Շնորհալ(ւ)ոյն սրբոյ: Եւ անտի խթեալ դեպ ի ձախ՝ հասի ի քնիկ գեօղն իմ Զեյթուն, ի հանդիպումն չիւրմի Սրբազան վարդապետիս եւ նախեաց իմոց, եւ ի տեսութիւն եղբօր իմոյ Ստեփանոս քահանային: Եւ յետ աւուրց՝ դարձայ միաբանիւքս հանդերձ ի Գաղատիայ վիճակս մեր:

Յետ ամաց չըջանաւորութեան ի ՌՃԿԱ Թուին, շնորհօք ամենակարօղ զօրութեանն Աստուծոյ ձեռն (6) ետուր սրբոյ վանացս մեծութեան, քանզի դիրք տեղ(ւ)ոյս չըջապատութեան գրեթէ էր եռանկիւնի, գոյով կողմն արեւմտից նեղագոյն քան զարեւելեանն, Աստուծով եղեւ զի բազում ծախիւք տեղ առեալ ի դրսէ եւ կրկին քան զյառաջինն մեծացաւ չըջապատութեամբ եւ լայնացաւ կողմն յարեւմտեան քան զարեւելեանն, որպէս տեսանի: Եւ ի վերայ նոր առեցեալ տեղեացս կառուցաւ դարպասն մեծ՝ կրկին սրահիւք, վասն բազմութեան երբեմն պատահեցեալ ուխտաւորաց ի տօնին, որ հայի յուսամտօքն յերես դաշտին եւ գետոյն: Իսկ ի բուն յարեւմուս՝ վերնատունք եօթն մեծ եւ փոքր խցերք, եւ ի ներքոյ՝ նոր պեղեցեալ ջրհորն, որ արբուցանելոյ եղանց եւ պախրոց ի ձմեռան: Յետ այսորիկ ասացելոց եւ ստացումն եպիսկոպոսական մեծածախ զգեստին եւ չըջանալ Թադին կազմութեան, եղեւ Աստուծով առնուլ արտի միոջ հարաւ կոյս կցորդ սալալարիկն երկարեցման, եւ միւս մեծագոյն արտի՝ որ յարեւմուս կոյս, ի ներքոյ առուի վանացս, որ ալազգ(ւ)ոյ էր, եւ վաւարտեղ՝ վասն ջրոյն ոռոգման. եւ միւս եւս ի ներքոյ ար-

տի Մովսէս վարդապետին, զորս ստացաք բազում ծախիւք ի կալան սրբոյ վանացս (7), զորս բարով վայել(եա)ցէ:

Նորոգեցան եւս եւ մեծաց(ան) ամենայն եկեղեցիք քաղաքիս, որպէս տեսանին: Ընդ նոսին եւ նորոգեցան եւ ի Ղոնեայ, եւ խորանն Սուրբ Կարապետին, որ ի գաւիթս եկեղեցւոյն, եւ Ախլիհրու եկեղեցին, այլ եւ Ղարայհիսարու մինն, եւ Նալլու խանին, եւ մնաց Ստանողունն՝ վասն անմիաբան կոստութեան նոցին, զորս Տէր Բրիստոս հաստատ եւ անփորձ պահեսցէ. ամէն:

Իսկ ի թուիս հայոց ՌՃՀԴ Հոկտեմբեր ամսոյ, սրբազան Տէր Աստուածատուր Կաթողիկոսն, որ յաջորդեաց Զուղայեցի Աղեքսանդր Կաթողիկոսին, ի գիշերին ի պատահական խաւարումն լուսնին, որ պատահի ի լրմանն ժամու, մինչ արեգակն եւ լուսին ի մի գիծս ընթացման լինին, զարթոցանեն զՍրբազանն ի քնոյն աչակերտք իւր, որպէսզի զբոսնուցու եւ ասացէ բան ինչ ի ցուցմանէ խաւարմանն: Եւ զի Սրբազանն գոլով տեղեակ այնր շնորհաց, մարդարէանայ քան թէ պարզարանէ ասելով. Զի՞ հարցանէք զիս, ահա ցուցանէ թէ մեծ ոմն մեռանելոց է: Եւ ի դառնալն յեղերաց տեղ(ւ)ոյն, եւ զի տակաւն չեւ սթափեալ ի քնոյն, իսկոյն սահեալ ոտն Սրբազանին եւ անկեալ ի (8) բարձրութենէն ի խոնարհ յերկիր եւ ողնաբեկ եղեալ, եւ յետ առմանն Սրբութեան՝ աւանդէ զհոգին առ Աստուած: Յորում ամի տեղակալեաց ազգ Օսմանցւոց ի յազդէն Պարսից զբազում տեղիս, յորում նախ տարւով յառաջ գտունն վրաց, յետ որոյ գտունն Արարատեան, եւ զինի զԵրեւան, զՆախջուան եւ զԹաւրեզ եւ զայլս ոմանս քաղաքունս՝ մերձ Պաղտատու: Եւ այս քանի ամբ են որ հալածումն մեծ է ազգին Պարսից յերկուց գիւմաց, ի յարեւելեաց ազգէն Աղուանից, որք տիրեցին Շահաստանին Ասպահանու, եւ զհաճն ձերբակալ արարեալ կուրացուցին. եւ յարեւմտից կողմանէ յազդէն Օսմանցւոց, որպէս գրեցաւ:

Բայց վա՛յ մեզ եւ եղո՛ւկ հաղարից, որ տառապեալ եւ խեղճ ազգս Հայոց եղեւ խղճալի ի մէջ երկուց արոց պատերազմողաց, զի զգոյս եւ զստացուածս զորս ունէին՝ նախ պարսիկն ասպուսաց եւ խուկեաց, իսկ մնացեալ զմերկ անձինս ահա հաղարացիք եւ հոնք գերի վարեցին զանթիւ բազմութիւնս, որք ցիր եւ ցան եղեն յամենայն տեղիս, զատեցեալք որդիք ի հարց, եւ մեկնեալք դատերք ի մարց, տրոհեցեալք եղբարք յեղբորէ եւ (9) բաժանեալ փեսայ ի հարսնէ իւրմէ. եւ այնք ամենայն ի դուռն կորստեան հոգւոց, որ ի ձեռն այլազգեաց. ահա կոծ կսկծալի եւ սուգ անմխիթար, որք երանեն զմեռեալս եւ զսրոյ ճարակ գնացեալսն, զի ինքեանք զօրհանապաղ մեռանին եւ կենդանի կեան, եւ այն շաղխեալ յակամայ ի մեղս: Անթիւք են որ ի մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս եւ յայլ քաղաքունս ազատեցեալք եղեն յազգակցէ Հայոցս, բայց առ բազմու-

թեամբ կորուսելոցն սակաւք են փրկեցեալքն որ առ քրիստոնեայցս: Փա՛ռք ներողութեան Ամենատեառն Աստուծոյ. միթէ ասիցէ՞ կան ցրբուտն՝ թէ ընդէ՞ր արարեր զիս անարդ, վասնզի արդար է Տէր եւ ճշմարիտ դատաւոր, որ զիտէ հարկանել եւ բժշկել, եւ ընդ բարկութեանն՝ զողորմութիւն յիշել, յորժամ խոնարհեալ ապաշխարիցեմք՝ իցէ թէ ողորմեսցի ազգիս Հայոց եւ բժշկեալ փրկեսցէ զժողովուրդ իւր, բարեխօսութեամբ ամենասուրբ Աստուածածնին եւ աղօթիւք Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին:

Այսպիսով խղճալի եւ դառնազոյն ժամանակիս, անտէրունջ մընացեալ աթոռն Սուրբ Էջմիածնի, վասն որոյ արի եւ արդիւնական Յովհաննէս վարդապետն Բաղիշեցի, որ ի դասատանէն Ամիրտօլու, ի տասներորդ ամի Պա(10)տրիարքութեան Կոստանդնուպօլսոյ, որ է աշակերտակից մեծին Գրիգորի Սրբազան Պատրիարքին Սրբոյ Երուսաղեմի, որ երկօրին պայծառազոյն ջահքս արբոյ եկեղեցւոյ, շնորհօքն Աստուծոյ զօրացեալք մտին ի ներքոյ վեց հարիւր քսակ պատուցն Սրբոյ Երուսաղեմի, եւ Աստուծով տարովս այսու վճարեցին զամենայն. վասնզի եւ Պատրիարքն միաբան է եւ մեծ ջատագով Սրբոյ Աթոռոյն Երուսաղեմի: Յետ որոյ լուեալ հոգացողութեանն, լուեալ եւ զվաղճան Սրբազան Կաթողիկոսին Աստուածատրոյ՝ հոգ տարեալ եւս եւ հաւաքեալ զքահանայս եւ զիշխանս մեծի քաղաքին Կոստանդնուպօլսոյ, եւ խորհուրդ ի մէջ առեալ վասն Սուրբ Էջմիածնի՝ թէ զո՞ կոչեսցեն ի կաթողիկոսութիւն:

Եւ յաւուրսն յայնոսիկ ես գաղաչեալս ելեալ էի յայցելութիւն ի թէմս եւ ի վիճակս վանացս Գաղատիոյ, որպէս լեալ է սովորութիւն երեք տարին միանգամ չրջել յամենեսին, յորս ի չրջելն դտայ ի Ղարայհիսար, որ է վիճակս մեր. եկին յանկարծ արք երեք ի Բիւզանդիոյ, վարդապետ մի ի վարդապետաց, քահանայ մի ի քահանայից եւ իշխան մի յիշխանաց՝ ունելով ընդ ինքեանս արդ եւ մահաար մեծ, լի կնքօք քահանայից եւ իշխանաց առ նուաստութիւնս իմ, որպէսզի վաղվաղիցեմ իջանել առ նոսա (11) ի քաղաքն մեծ:

Եւ իմ տեսեալ՝ արդարեւ բազմիցս հրաժարեալ չոգայ յետս, զբազում ինչ անկարութիւն պատճառելով, մանաւանդ զծերութիւնս եւ զցաւազարութիւնս իմ ցուցանելով: Այլ ոչ կարացի զերծանել, վասն որոյ իջի ընդ նոսա ի քաղաքն մեծ, որպէսզի եւ ցուցեալ զծերութիւնս իմ եւ դարձայց ի վանս: Բայց եւ ոչ թողին զմեղաւորս անտանօր, այլ միախառն կամեցան կացուցանել Կաթողիկոս:

Եւ մինչ տակաւին չէի յանձնառուկ, եկին եւ հասին այլ եւս մեծամեծ հայկապոսոսունք ի յարեւելից եւ ի բոլորից, ուր եղեւ կոյտ եւ բազմութիւն հայկապոսաց, եւ միաբանեալք ընդ Պատրիարքին եւ քաղաքայնոց քահանայիցն եւ իշխանաց եւ ամենայն ժողովրդոցն, եւ ի մէջ բազմահաւաք(?) աւագ սուրբ եկեղեցւոյն ամենասուրբ Աս-

տուածածնին, օծին զմեղաւորս Կաթողիկոս Ամենայն Հայոց, ի ՌՃՀԵ Թուին, յերկրորդում շարաթու աղուհացիցն, յաւուր Կիւրակէի, որ օր Ժէ էր Փետրուար ամսոյ:

Եւ ի միւսում աւուր երկուշաբթի, որ էր Փետրուար ամսոյ ԺԸ, ի մէջ նոնոյ եկեղեցւոյն եւ ներ նոյնում բազմութեան, եւ ըստ խնդրոյ վեցից ճօմահաթից, քահանայից, իշխանացն եւ ժողովրդոց, մանաւանդ եւ ըստ վկայութեան արժանաւոր անձինն, զվերասացեալ արի եւ արդիւնական Պատրիարք զՏէր Յովհաննէս աստուածաբան (12) վարդապետն ձեռնադրեալ օծի Արքեպիսկոպոս մեծի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ:

Քանզի այն տասն ամ էր որ Պատրիարք էր մեծի քաղաքին եւ տակաւին չեւ էր լեալ եպիսկոպոս, վասն բազմութեան զբաղանացն, թէ՛ վասն եկեղեցեացն դարմանի նորոգութեանցն եւ վասն պարտուց նոցին վճարմանցն, թէ՛ վասն կառավարութեան պատրիարքութեան եւ թէ՛ վասն գործակալութեան Սրբոյ Երուսաղեմին, ոչ կարելոյն ելանել ի Սուրբ Էջմիածին:

Յետ որոյ սոյն այս հոգեծին նախնի անդրանիկ նորընծայ Պատրիարք որդեակս իմ, խորհրդակցութեամբ իշխանացն ամենեցուն, հանին հրաման արքունական վասն մեր յոյժ պիտանի եւ կարեւոր, խեթկիչ բռնաւորաց, զի մի՛ արդելօղջ լինիցին հոգեւոր հրամանաց եւ դատողութեան մերում եւ կամ նեղեցեան զնուիրակունս մեր, եւ այլ սոյնպիսի վեցեսին հրամանս սաստիկս, ի յօգուտ եւ յապահով յանդատակացութիւն Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, եւ նորին կալուածոցն, հողոցն եւ ջրոցն եւ միաբանիցն, ոչ միայն Սուրբ Էջմիածնին, այլ եւ ամենայն վանորէիցն. որովհետեւ կալան գերկիրն Օսմանցիքն, եւ է Սուրբ Աթոռն ի յանցս ճանապարհին պատերազմաց, եւ չեւ եւս են հաշտեցեալք, կարի իսկ հարկաւորք են այսպիսի հրամանքս զորս ընկալաք:

Յայսմ վայրի կոչեցի ա(13)ռաջի իմ զձեռնասուն որդեակս իմ զՏէր Մովսէս աստուածաբան վարդապետն, որ ընդ յիս կայր, եւ կամաւ եւ յօժարութեամբ բարտիս շնորհեցի զվանքս զայս հանդերձ ղեմօքն եւ վիճակօքն Գաղատիայիս, ի ձեռն որդւոյս, եւ կարգեցի ի վերայ ամենեցուն հովիւ հոգեւոր եւ Առաջնորդ բարեչաւիղ, եւ առաքեցի աստ ի կառավարումն վիճակիս, զորս բարով վայելեացէ:

Յետ այսորիկ գրեցաք առ միաբանսն Սրբոյ Էջմիածնին, զի խաղաղութեամբ եւ սիրով աղօթից եւ ժամաւ արի կացցեն: Գրեցաք եւ յամենայն քաղաքունս զօրհնութիւնս, որպէս օրէն է եւ արժան:

Գրեցաք եւ առ երջանիկ Պատրիարքն Սրբոյ Երուսաղեմի Տեառն Գրիգորի մեծագունի վարդապետին, վասն խնդրոյ իրիք ինձ պիտանացելոյ: Որ եւ նա լուեալ եւ առաքեաց զայն: Ընդ նմին եւս առաքեալ զԱթոռակալ եւ յոյժ սիրացեալ որդեակն զՀաննայ վարդապետն

Երուսաղեմացի, որ սնունդն է Սրբոյ Յակոբայ, առաքելով նովաւ ընծայ առ ապարժանութիւնս մեր հանդերձ շնորհաւորական գրով ըզսուրբ նշան մի ոսկեղէն, ընդելուզեալս ակամբ գոհարեղինօք, որ ունի յինքեան զանհամեմատ զգանձն աստուածունակ, այսինքն՝ զմասն ամենասուրբ Կենացն Փայտի երկրպագելի Պաշին Քրիստոսի, որոյ ընդդէմ ելեալ երկրպագելով ընկալայ ի վերայ գլխոյ իմոյ, զնելով եւս ի վերայ աչացս իմոց, գոհացայ ի պարգեւողէն Աստուծոյ, (14) որ այժմ ունիմ ի պարանոցի իմում:

Վասն որոյ ի աէր սրբոյ նշանիս, կոչեցի զսուրբ նշանաբերն, այսինքն՝ զՀաննայ վարդապետն, հանդերձ միւս այլ եւս անդրանկանս իմոյ Պատրիարքին աչակերտ եւ որդեակ զԹովմայ վարդապետն, որք հոգեկիցք են նախագոյն իրերաց, առնլով զծայրադոյն դաւադանս մեծի վարդապետութեան ի միոջէ ձեռանէ, այսինքն՝ յանդրանկանս իմոյ Պատրիարքէն. որք թէպէտ երիտասարդք հասակաւ, սակայն ալեօք իմաստութեան կատարեալք եւ շնորհալիրք, զորս ի պատիւ երեսաց երկուց Պատրիարքացն, այսինքն՝ Տեառն Գրիգորի Սրբազան Հայրապետին Սրբոյ Երուսաղեմի եւ Տեառն Յովհաննէսի Պատրիարքի եւ Արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսոյ, իմոյս անդրանիկ, ձեռնադրեալ հոգւովն Աստուծոյ օծի զՀաննայ եւ զԹովմայ վարդապետսն, զհոգեւոր որդեակքս իմ եպիսկոպոս, ի գործակալութիւն Սրբոյ Երուսաղեմի եւ ի ապաստանութիւնս երկուց երջանկաց Պատրիարքացն, զորս բարով վայելեացեն զմիմեանս:

Աստանօր ի շողկապումն արժանաւոր սիրոյ երկուց Սրբոց Աթոռոցն, այսինքն՝ Սրբոյ Էջմիածնին եւ Սրբոյ Երուսաղեմին, սիրեցեալ Պատրիարք անդրանիկս իմ, հանդերձ միաբանեցեալ եւ օրհնեալ եւ բարեբարոյ քրիստոսասէր իշխանօք մեծի քաղաքին, կամեցան եւ պատրաստեցին մեզ իջեալսն առանձինս, մինչեւ ցերթս մեր ի Սուրբ Աթոռն, եւ զհոգեւորուն Սուրբ Երուսաղեմի որ յուսկուտար, մերձ եկեղեցւոյ Սուրբ Կարապետին, որոյ նախնի հեղինակն եղեւ Մարտիրոս մեծ (15) եւ աստուածաբան վարդապետն Կաֆայեցի, որ էր հայրապետ Սուրբ Երուսաղեմի, որ մականուամբ Թաքաթ կոչիւր: Այն հոգեւորուն զինի մահուան Տեառն Մարտիրոսի՝ ամայի եւ անխնամ գոլով, փտեցեալ, խարխարեալ եւ քայքայեալ, ձեռն ետուն ուրեմն նորոգել. եւ նորոգեցին շատ դրամածախիւք, եւ զարդարեցին ամենայն պիտոյիւք պատուականօք, ի պատիւ մեր. եւ անդանօր հանդուցին զծերս, միաբանիւքս հանդերձ:

Տեսեալ եւ իմ զսէր վերասացեալ շինողացն, եւ խորհուրդ առեալ ընդ իմոցն, կամեցայ օգնել Պատրիարքին Սրբոյ Երուսաղեմի, որ այն ինն ամ էր որ զերկաթ աղխեալ ունէր ի պարանոցին, զոր ուխտիւ եղեալ՝ թէ մինչ ոչ վճարիցի Սրբոյ Աթոռոյն Երուսաղեմի, մի՛ բացցի եւ մի՛ ելցէ երկաթն ի պարանոցէն: Ուստի, լուեալ ամենե-

ցուն եւ մեր եթէ խիստ մաշեալ եւ հալեալ է անձն եւ պարանոցն ի նեղութենէ, որ ի տուէ եւ ի գիշերի ունի զայն: Եւ զի որովհետեւ կրկին ուխտագիր քի գնալ ի Սուրբ Երուսաղէմ, եւ ահա ոչ ետուն թոյլ ազգս իմ մուծեալ զծերութիւնս իմ ի մէջ մեծագունի զբաղանաց կաթողիկոսութեան, որ յայտ է թէ ոչ եւս կարեմ գնալ յուխտա- կատարութիւնս: Ետու ուրեմն զբաժին ուխտիս որ էր ընդ յիս՝ ի յօգնութիւն Սուրբ Երուսաղէմի, եւ նորին հայրապետի, առաջի իշ- խանաց քաղաքին, եւ մատուցի առաջի նոցա ի ձեռն նորնեմայ ե- պիսկոպոս Աթոռակալին Սրբոյ Երուսաղէմին: Եւ (16) հետեւապէս յորդորեցի նախ զԱթոռակալս իմ զՏէր Մանուէլ վարդապետն Աս- տապատեցի, որ ետուր մէկ քէսէ դրամ: Եւ ապա սկսայ յորդորել զիշխանսն, որք լսելով ծերութեանս՝ ժողովք մեծ արարին ի քաղա- քին յամենից էսնաֆից, զորս ընդ հաւատարիմ ուխտաւորացն առա- քեցաք ի Սուրբ Երուսաղէմ: Որով եւ գրեցի առ երկաթակալ Սրբա- զան հայրապետն՝ հանել զերկաթն ի պարանոցէն: Գնաց ուրեմն Ա- թոռակալն Երուսաղէմի նաւազնացութեամբ, հանդերձ բազում տէ- րունական ուխտաւորօք, եւ Աստուծով ի եօթնեւտասն օրն հասեալ են խաղաղութեամբ ի ծովեզերն Յոսպէ, որ ասի Եաֆա: Եկն զիւր թէ եւ ելեալ են ի Սուրբ Երուսաղէմ եւ հանեալ են զերկաթն ի պա- րանոցէ բազմաշխատին:

Ի վերոյ ասացաւ թէ շինեցաւ հոգեւորն՝ ուր վանս կալայ եօթն ամիս, հանդերձ միաբանիւքս: Ի միջոցի անդ ի ծախս ել տուն մի հոռոմի յարեւելս կոյս որմ(ն)ակից հոգեւորն: Եւ զի լու եղեւ մեզ թէ հոռոմք առնելոց եւ հիւանդանոցս շինելոց են, խնայելով ապա հոգեւորն, զի մի՛ հիւանդահոռոմ եղիցի եւ վաղձելի բնակելոցն ի վա- նատունն կարգաւորացն պատահելոց, հարկաւորեց(այ) ուրեմն եւ տուեալ զգին տանն մէկ քէսէ եւ կէս, եւ առեալ խառնեցի վանա- տանն, որ եւ նա Աստուծով է նորոգելոց, որպէս եւ խոստացաւ Պա- տրիարք անդրանիկս իմ, ի բնակութիւն պատահեցելոց միաբանից երկուց Սրբոց (17) Աթոռոցն: Արդարեւ տեղ նստելոյ եւ վայր վա- յելուչ, բարձրագունեղ քան զամենայն շինս Իւսկիւտարու, գիտա- րան Բիւզանդիոյ եւ Ղալաթիոյ եւ այլոց բազմաց, եւ զբօսարան եր- կուց ծովուց եւ նոցին նաւուց, օգիւք բարեխառն եւ հողմամբք ա- ռողջարար, ընդ որս յամելս իմ ոչ այնքան վասն գովութեանս, քան թէ ի յօգնութիւն գերելոց ազգիս մերում ազատութիւն, ուր եկե- լոցն ձրիապէս շնորհեցի զգիր ժողովարարութեան, ի յորդորումն բարեպաշտ եւ ողորմած ազգիս մերում, մանաւանդ ըստ ամենայն պօլսեցւոցն, որոց ողորմութիւնն գեր ի վերոյ է եւ զարմանալի, ո- րոց վաստակոցն Տէր Քրիստոս աճումն, առատ օրհնութիւն եւ շը- նորհս պարգեւեցէ:

Իսկ ի մուտս Յունվար ամսոյ, կոչեցեալ եղեաք ի պատուական

Պատրիարքէն եւ յիշխանացն ի յՍտամպուլ, վասն տօնին Ծննդեան Տեառն, որ եւ չողաք եւ կատարեցաք ի գեղեցկագոյն եկեղեցին Սըր- բոյն Գեորգեայ, որ լայնանիստն է իջեւանօք եւ ծովահայեաց, ուր կատարեալ ո՛չ միայն զԾնունդ Տեառն, այլ եւ զՊասեքն սուրբ՝ մինչ ի Նոր Կիւրակէն:

Եւ զի թէպէտ հրաւիրեցեալ եղեաք յԵտրենեցւոց եւ բազմիցս ի Թեքիրտաղցւոց, այլ ոչ յաջողեցաւ գնալ, բայց միայն ի կոչունս Պուրսացւոց, ուր չուեալ հասաք Ապրիլ (ամսոյ), որոյ Առաջնորդն Ներսէս վարդապետն ստամպուլցի, թէպէտ հիւանդօտ եւ դողդոհ, բայց շատ շնորհացի եւ ատենաբան, որ քահանայիւքն եւ իշխանօք անպատմելի ա(18)րարին եւ ցուցին զսէր եւ զընդունելութիւն, հան- դերձ պարագայիւք ընծայից եւ տրոց, ուր եկն եւ Առաջնորդն Իգ- միրու, հոգեւոր որդեակն իմ Մինաս վարդապետն ակնցի, գրով հրա- լիրանաց ի քաղաքն Իզմիր: այլ ոչ կամեցայ երկարել զճանապարհս: Եւ զի եկեալ էր ընդ յառաջ նոր Առաջնորդն Գաղատիոյ՝ Մովսէս վարդապետ որդեակս իմ, քահանայիւք եւ իշխանօք իւրովք ի հրաւեր մեզ, առ որ հաճոյացայ: Եւ յետ Եղիականին կիւրակէի՝ ելեալ ի Պուրսայու, եւ Յունիս ամսոյ եօթն խաղաղութեամբ հասաք, աստ ի սուրբ վանս մեր, եւ երկրպագեալ սրբոյ տաճարիս ամենասուրբ Աստուածածնին: Եւ ի միւսում աւուրն զգոհացողականն մատուցաք զպատարազն սրբաբար, յորս բարեւոք ընդունելութիւնս ցուցին մեզ քաղաքացիւքս եւ ազատութեամբ եղեն ընծայամատոյցք: Այլ եւ եկին ի տեսութիւն եւ յաջահամբոյր մեզ ի բոլոր վիճակաց սուրբ վանացս, քահանայք եւ իշխանք: Եւ ի Ղասապայից յարեւելական վաճառա- կանք, եւ պաշտեցին զմեզ ըստ կարեաց իւրեանց, ի սէր սուրբ Լու- սաւորչին: յորոց ամենայնէ շնորհակալ եմ, զորս օրհնելով օրհնեացէ Տէր Աստուած մեր:

Ներ ասացեալ յաւուրսս յայտոսիկ Վոչեցի զաւագ երիցունս ե- կեղեցեացն եւ զԷլիսաւոր (19) իշխանս քաղաքին Էնկիւրիոյ, եւ մը- տեալ ի տաճարն սուրբ եւ առաջի ամենեցուն եւ սուրբ վանացս միա- բանից, բացեալ զքարեղէնս եւ զգրեանս բազումս զհոգեւոր եղբօր իմոյ Յովհաննէս վարդապետին գեյթունեցւոյ գեղալցի իմոյ, որ ան- ցեալ տարին մինչ տարին զիս ի Բիւզանդ, նա աստ Մարտի ամսոյ իը- ցեալ ամենամ հանդուցեալ, որ էր բազկակից իմ եւ աջ ախոյեան սրտի իմոյ, անձն ճգնադղեաց եւ յարատեւ առաքինին, որ զամենայն ա- լուրս պահօց՝ անսուաղ անցուցանէր, եւ էր մեծ գործակալ սրբոյ վանացս, որ եւ տեւեաց աստ ընդ յիս ամս երեսուն, ուստի կսկիծ մորմոքանաց եւ սուգ անմխիթար եղեւ ներ սրտի իմում վասն պա- կասելոյն, որոյ արժանաւոր հոգին ընդ սրբոց ճգնաւորաց եւ սրբոց վարդապետաց պսակեացէ Քրիստոս Աստուած մեր, եւ սուրբ նորին աղօթիւք եւ մեզ ողորմեացի:

Զսորա զինչսն եւ զգրեանս բազումս, եւ զձեռն մի զգեստս անպակաս, այլ եւ զսպասս սրբոյ տաճարիս, որ եռապատիկ եւ այլ աւելի առաւելեալ յաւուրս իմ, թէ՛ արծաթեղէն խաչերք, կանթեղանք, սրկիւնք, սաղաւարտք, վարչամակք եւ զաւարտք, եւ այլ, թէ՛ մետաքսեղէն եւ կամ զխալկեղէնք զգեստք եւ զարդք սրբութեանց. նաեւ արտաքոյ եկեղեցւոյն՝ զոր ինչ քարեղէնք (20) խցականք, խալիք եւ խալիչայք նորք եւ կարպետք նորք բազումք եւ սակաւ հինք, եւ զոր ինչ ի մառանատունսն եւ ի մոլթպաղն՝ պէտքաւ պղնձեղէնք բազումք եւ անթթք պատուականք նորք եւ հինք, որ ներ քառասուն տարւոյս հաւաքեալ եւ ստացեալ եմ, զամենեւին գրով յանձնեցի նոր առաջնորդ որդեկի իմոյ՝ Տէր Մովսէս աստուածաբան վարդապետին, պարունակ բազմաց:

Ահա զվանք մի հռչակաւոր, որ Աստուծով կուսութեամբ պահեցի լրացեալ ամենայն պիտոյիւք, նա եւս գոմշովք եւ եղամբք եօթանեսին թոց, եւ պախրիս կաթնատուրս բազում, եւ զմեծամեծ համբարանոց լիս ցորենովք եւ ամենայն բարութեամբք իբրեւ միջարեր վաւակի, թողի ի ժառանգութիւն սմա եւ ամենայն միաբանից. եւ այս ամենայն ի փառս Աստուծոյ եւ ի պայծառապահութիւն սրբոյ վանացս եւ սուրբ տաճարիս ամենասուրբ Աստուածածնի:

Այլ եւ ետու հազար զուրուշ իշխանաց քաղաքին մահտեսի Մաւարին եւ երեսփոխան մահտեսի Եննուսին, զի ի գործ ածեալ առեւտրին իւրեանց շահեցուցեն, եւ զոր ինչ վաստակիցի դրամն իմ՝ այնու տացեն զգլխահարկ խարան միաբանից, եւ զաւելեալսն տացեն շորեղէնք եւ զգեստ միաբանից: Եւ մի՛ ոք խախտեսցէ ըզհազար զուրուշ մայր դրամին (21) որ ինչ պատճառաւ եւ իցէ, զի վասն հասարակ միաբանից է:

Այլ եւ նոր ստացեալ ունիմ երկու հարիւր ոչխարս, որ կայ ի դեօղն Ստանօզ, ի ձեռն հովուի, որ արածէ օրթաղութեամբ ծնելոց դառանցն. զնոցին զասրսն խոտեցեն ի ժամանակին եւ վաճառեցեն, եւ նովին զնով զձէթ գնեցեն, եւ այնու վառեալ լուսաւորեցեն զկանթեղունս Սուրբ Աստուածածնի տաճարիս. եւ միամտութեամբ արտի ապրմոսելով աղօթեցեն վասն ամենեցուն պատճառաց եւ ինձ տառապելոյս:

Այլ եւ երկու ամօք յառաջ գնեցի ի ձեռաց այլազգեաց երիս դերեցեալս յարեւելից, յաղպէս Հայոց, որոց գինն ետու եմծ (= 550) զուրուշ. երկուսն կոյս աղջ(կ)ունք եւ մինն տղայ մատաղ: Տղայն աստ առ Տէր յաւելաւ, եւ աղջկունքն ի քաղաքն պահեցան ի տունս իշխանաց՝ յորս կան:

Են աստ ի վանս սուրբ երկու եղբարք, Ռվանէս եւ Սարգիս, ի զեղորէիցն մեծի Անտիոքու, որ Սուէյտա ասի լերանցն, եւ են մշակունք եւ արագ աշխատաւորք, յորս ըստ արժանեաց իւրեանց եւ

վասն հաւատարիմ ծառայութեանցն եւ պարկեշտութեանցն հաճեցայ, վասն որոյ ըստ պատշաճելոյն Աստուծոյ՝ ահա նշանեցի եւ հարսնացուցի զերկոսին կոյսն ընդ երկոսին կոյս եղբարց:

Եւ ունէի տուն մի ի քաղաքին, ետու նոցա ի բնակութիւն, զի եւս քան զեւս հաւատարմութեամբ (22) ծառայեալ զմշակութիւնն արասցեն սրբոյ վանացս, եւ վարձովք իւրեանց ապրեսցին ի փառս Աստուծոյ:

Աստանօր գիտելով յետս թողի զյիշատակ գրոցս՝ զորս թողի աստ համառօտ յիշատակարանօք, ընդ որս եւ զգրչագիր մատենաստուածատուր պատգամաց՝ յիշատակ ի ծոց վանացս Սուրբ Աստուածածնի, ինձ եւ հոգեւոր հօր իմոյ Տէր Ստեփանոս վարդապետին. եւ մարմնաւոր ծնողացս հօր իմոյ Մարտիրոսի, Տառնկ կոչեցելոյ, եւ մօրս Մարիամու՝ հանդուցելոց ի Տէր: Վասն որոյ հայցեմ ի միաբան վայելողացդ եւ ընթերցողացդ զյիշատակարանս զայս՝ խնամով պահել զգրեանս իմ բազումս, եւ զՍուրբ Աստուածաշունչս, եւ մի՛ զատուցանել զյիշատակարանս ի սուրբ գրոցս, կամ եղծելով եւ կամ պատառելով, այլ սիրով վայելել եւ Աստուած ողորմի ասել, ինձ Կարապետ իբրու Կաթողիկոսիս Սրբոյ Էջմիածնի, եւ ծնողացս Մարտիրոսին եւ Մարիամին, եւ եղբարց իմոց՝ Տէր Ստեփանոսին, Կարապետ վարդապետին աստ վաղճանեոյ, մահտեսի Ռվանէսին եւ Մկրտչին, եւ քուերց իմոց Ոսկին եւ Մամոցին:

Այլ եւ յիշեսցիք զկենդանի եղբորորդեակն իմ զՏէր Յակոբն եւ զհնգեսին որդիսն իւր, եւ զամենայն արեանառու մերձաւորսն իմ, որով եւ դուք յիշեալք լինիցիք ի Քրիստոս, եւ անուանք ձեր գրեցեալք (23) լինիցին ի կենացն զպրութեան:

Եւ արդ՝ որ ոք գողացցէ եւ կամ զրկելով հանցէ եւ կամ գրաւ դիցէ զգիրքս եւ զայսս ի գրեանց իմոց, եւ կամ կորուսեալ զրկեսցէ զյիշատակարանս իմ ի գրոցս, որք յիշատակեցան ի դուռն սրբոյ վանացս, այնպիսիքն եղիցին նզովեալք ի հոգեւոր իշխանութենէս մերմէ, եւ կապեալք հոգւով եւ մարմնով յերկինս եւ յերկրի, եւ պատժեցեալք ըստ Կայնի եղբայրասպանի, ընդ գողոյն Զամրեանն Ագարու, եւ ընդ Յուդայի Իսկարիօտացւոյ, աստ եւ ի հանդերձելումն. իսկ խնամով պահողքն օրհնեալք են եւ օրհնեցեալք եղիցին:

Գրեցաւ յիշատակարանս ի ՌՃՀԶ (= 1727) Թւոյ տօմարի Հայոց, Սեպտեմբերի Ան, աստ ի վանս սուրբ, ձեռամբ անարդիւն Յարութիւն սարկաւագի:

Հրտ. Հ. Ս. Ճ.